




Ապրիլ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ՍԵՐՈՎԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՎՎԱԿԱՆ
ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒԱՆԴԻԱ ԵՎ ԸՎԵԴԻԱ

1977 թվականի նոյեմբերի 5—7 օրերին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, ընկերակցությամբ հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ եպիսկոպոս Նազգաշյանի, հովվական այցելություն է տվել Հոլանդիայի նորակազմ հայկական համայնքին:

Նոյեմբերի 6-ին, կիրակի օրը, սրբազան հայրը, ավելի քան հինգ հարյուր հավատացյալների ներկայությամբ, պառարագել է Հոլանդիայի Ամրաֆորթ քաղաքի Հին կաթողիկոսների եկեղեցում և քարոզել «Մի՛ երկնչիր, հօ՛տ փոքրիկ» բնաբանով: Իր քարոզի սկզբում տ. Սերովբե արքեպիսկոպոսը եկեղեցում հավաքված հայ ժողովրդի բազմությանը հաղորդել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Նրա արժանընտիր զանակալ

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությունները: Այնուհետև, անդրադառնալով իր քարոզի բնաբանին, նա նշել է, որ Քրիստոսի վերոհիշյալ խոսքը՝ ողորկված իր ստաբլայների փոքրաթիվ խմբին, պատշաճում է նաև 1915 թվականի Մեծ եղեռնից հետո աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի տարագիր զավակներին, այդ թրվում նաև Հոլանդիայի հայկական փոքրաթիվ համայնքին, որպեսզի օտար ափերում առանց երկնչելու դիմագրավեն ամեն տեսակի դժվարություններ՝ ամուր և անադարտ պահպանելու համար իրենց հավատքը, մշակույթը, լեզուն և ինքնությունը:

Սերովբե արքազանն իր խոսքի մեջ մասնավորապես շեշտել է այն պարագան, որ այժմ արդեն անհրաժեշտ է, որ հոլանդահայ համայնքը, որպես մեկ մասը Արևմտյան Եվրոպայի հայրապետական թեմի,

կազմակերպի իր ազգային, եկեղեցական և մշակութային կյանքը և համերաշխ գործակցության պայմաններում լծվի խաղաղ ու շինարար աշխատանքի:

Այս ուղղությամբ սրբազան հայրն առանձին տեսակցություն է ունեցել համայնքային վարչության անդամների հետ և խորհրդակցել հոլանդահայ համայնքի եկեղեցական կյանքը լավագույն ձևով կազմակերպելու հնարավորությունների շուրջ:

Նույն օրը, ի պատիվ հայրապետական պատվիրակի, Հոլանդիայի հայ համայնքի կողմից կազմակերպվել է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են եղել ավելի քան երկու հարյուր հիսուն հոգի:

Հոլանդահայ համայնքը, որը նախապես բաղկացած է եղել շատ սակավաթիվ հայ ընտանիքներից, վերջին ժամանակներում ինդոնեզիայից, Թուրքիայից և մասնավորապես Մերձավոր Արևելքի երկրներից գաղթած հայերով բազմացել է և դարձել ավելի քան երկու հազար հոգուց բաղկացած մի համայնք:

Նոյեմբերի 7-ին, երկուշաբթի օրը, տ. Սերովբե արքեպիսկոպոսը, համայնքային վարչության անդամների և համայնքի մի շարք ներկայացուցիչների ուղեկցությամբ, մեկնել է Ամստերդամ՝ այցելելու տեղի հայկական հին եկեղեցին: Այս եկեղեցին, որը կառուցված է 1713 թվականին, այժմ հանձնված է կաթոլիկ մայրապետների մատակարարությանը և գործածվում է որպես վարժարան:

Նույն օրը, երեկոյան, տ. Սերովբե արքեպիսկոպոսը մեկնել է Ուտրեխտ՝ առանձին տեսակցություն ունենալու Ուտրեխտի արքեպիսկոպոս և Վատիկանի Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ կարդինալ Ժան Վիլլբրանդսի հետ: Երկու բույր եկեղեցիների քարձրաստիճան ներկայացուցիչների միջև տեղի ունեցած սույն տեսակցության ընթացքում, որը տևել է ավելի քան մեկ ժամ, շոշափվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք եկեղեցական հարցեր, այդ թվում մասնավորապես՝ Հոլանդիայում հաստատված նորակազմ հայկական համայնքի հոգեվոր կարիքների բավարարման համար առանձին մի եկեղեցի ունենալու անհրաժեշտության հարցը: Այս կապակցությամբ Ուտրեխտի արքեպիսկոպոսը բարյացակամ տրամադրություն է արտահայտել խոստանալով իր կարելիքն անել, որպեսզի Հոլանդիայի հայ հավատացյալներին վերադարձվի Ամստերդամի հայկական պատական եկեղեցին:

Նույն գիշերը Սերովբե սրբազանը վերադարձել է Փարիզ:

Այնուհետև, նոյեմբերի 11-ին, մեկ շաբաթ անց, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակը, ընկերակցությամբ տ. Գյուտ եպիսկոպոս Նազգաշյանի, ուղևորվել է Ծվեդիա՝ իր առաջին այցելությունը տալու տեղի նորակազմ հայկական համայնքին:

Ծվեդահայ համայնքը նույնպես վերջին մի քանի տարիների ընթացքում կազմված փոքրաթիվ մի համայնք է՝ բաղկացած շուրջ հինգ հարյուր հայերից, որոնց մեծամասնությունը բնակություն է հաստատել երկրի մայրաքաղաք Ստոկհոլմում, իսկ մնացած մասն ապրում է Ուփսալա, Մալմոն և Գյոթեբորգ քաղաքներում: Ստոկհոլմում արդեն մի քանի տարի է, ինչ գործում է Հայ մշակութային միությունը, որը ճանաչված է պետական իշխանության կողմից և վայելում է նրա օժանդակությունը: Հայ մշակութային միությունն ունի իր Կենտրոնը, որ նրան տրամադրել է շվեդական կառավարությունը: Միության անդամները կարճ ժամանակում կարողացել են կազմակերպել համայնքի կրթական, մշակութային ու մարզական կյանքը և գովելի նախաձեռնությամբ աշխատում են ազգային ոգին և միասնականությունը ամուր պահել տեղի հայության մեջ:

Նոյեմբերի 12-ին, շաբաթ օրը, երեկոյան, Հայ մշակութային միության սրահում շվեդահայ համայնքի կողմից, ի պատիվ սրբազան հայրերի, կազմակերպվել է պաշտոնական ընդունելություն: Ընդունելության ընթացքում, հանուն մշակութային միության վարչության, պրն. Ժան Կյուրինյանը բարեգալստյան ջերմ խոսքով ողջունել է սրբազան հայրերի ներկայությունն իրենց մեջ և այդ առթիվ հայտնել նրանց համայնքի ողջ անդամների անկեղծ ուրախությունն ու գոհունակությունը: Ապա հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսը, խոսք առնելով, գնահատել է Հայ մշակութային միության անդամների ազնիվ ու շինարար ջանքերը, հորդորել նրանց առավել հաստատուն հիմքերի վրա կազմակերպել շվեդահայ համայնքի կյանքը՝ միշտ նախաձեռնադիր մնալով իրենց ազգային և եկեղեցական ավանդություններին ու սրբություններին:

Նոյեմբերի 13-ին, կիրակի օրը, Ստոկհոլմում, առաջին անգամ լինելով, հայկական սուրբ պատարագ է մատուցվել տեղի ս. Սոֆիա եկեղեցում, որ այդ օրը տրամադրվել է հայերին՝ Ծվեդիայի եկեղեցական իշխանության կողմից: Պատարագին ներկա է եղել Ստոկհոլմի և նրա մոտակա շրջանների ամբողջ հայությունը: Պատարագին ներկա են եղել նաև ս. Սոֆիա եկեղեցու

հոգևոր տեսուչ հայր Էրիքսոնը և Ծվեդիայի եկեղեցիների արտաքին հարաբերությունների նախագահ հայր Պրիմորիոս Կարլսոնը:

Այս առթիվ նույնպես տ. Սերովբե արքեպիսկոպոսն իր քարոզի սկզբում ներկայացրին հաղորդել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հայրական ողջույններն ու օրհնությունները և ապա հանգամանորեն կանգ առել Հայաստանյայց առաքելական եկեղեցու ծագման, աստվածային հայտնության մեր մայր երկրում նրա հաստատման և հայ ժողովրդի կրոնական ու մշակութային կյանքում նրա կատարած քարերար դերի վրա՝ հայ եկեղեցին որակելով որպես «Տուն Աստուծո և ազգի», ինչպես ճիշտ կերպով բնորոշել է այն մեր ժողովուրդը իր փորձառական իմաստությամբ:

Սրբազան հայրն իր քարոզը եզրափակել է հետևյալ խոսքերով. «Այս նորակազմ գաղութն իր նկարագիրն ու ինքնությունը պահպանելու համար անհրաժեշտ է, որ

կապված մնա իր հայրերի հավատքին և իր ազգային ոգուն՝ Աստուծո և ազգին, և իբրև համայնք կազմակերպվի ա՛յս ոգով և ա՛յս սկզբունքով»:

Հավարտ պատարագի տ. Սերովբե արքեպիսկոպոսը մասնավոր մի տեսակցություն է ունեցել Ծվեդիայի եկեղեցիների արտաքին հարաբերությունների նախագահ հայր Կարլսոնի հետ՝ խորհրդակցելու համար, թե շվեդական եկեղեցին և կառավարությունը ինչ միջոցներով կարող են նպաստել շվեդահայ նորակազմ համայնքի ազգային ու եկեղեցական կյանքի բարգավաճմանը: Հայր Կարլսոնը խոստացել է, որ ինքն անձամբ պիտի աշխատի ամեն կերպ ապահովել պետության և մանավանդ շվեդական եկեղեցու օժանդակությունը:

Նոյեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակն ու նրա փոխանորդը վերադարձել են Փարիզ՝ զոհունակությամբ և լավագույն տպավորություններով:

